

Ազգի մը ապագայ կեանքի  
բարեօրոյման առաջին  
սկզբնականն է Միութիւնը:

« Միութիւն » ը ամեն  
տեղ ձրի կը զրկուի:

# ՄԻՈՒԹԻՒՆ

## Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

ՅՈՒԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՂԱՓԱՐԻ

ՀԱՍՏԷ

M. ARCHAM

Poste Restante

ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբագրու-  
թեան կը պատկանի:

Ա - ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 1896 ԱԹԵՆՔ

ԹԻԻ

5

ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

### ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թերթ մը որ « Միութիւն » կը  
կոչուի անշուշտ կը փորձէ չափա-  
դանց կարեւորութիւն տալ հայրե-  
նասիրական կուսակցութիւններու մի-  
ջև տիրած բաժանումներուն:

Կը ջանայ ցոյց տալ որ եթէ  
զանազան Բոսթիթէներու մէջ փո-  
խադարձ սէր, անշահախնդրութիւն  
և ուրիշ այս տեսակ խոչալական  
յատկութիւններ տիրէր, մեր հայ-  
կական գործերը աւելի աղէկ պի-  
տի ըլլային. — Ասիկա, ճշմարտոր,  
չափ գովելի բրոքականտ մըն է. —  
Բայց իրապէս մեր յաջողութիւնը  
կախուած է ուրիշ կարգ մը աւելի  
ընդհանուր խնդիրներէ:

Բան մը կայ որ նախ և ա-  
ռաջ պէտք է հաստատենք: Այսինքն  
թէ՛ մենք, հայերս, այս ժամուս  
յեղափոխութիւն մը գործելու վրայ  
ենք:

Արդ, կարելի՞ է որ յեղափո-  
խութիւն մը կատարեալ օրինա-  
ւորութեամբ տեղի ունենայ:

Ներկայ ժամանակներու մե-  
ծագոյն դէպքը, այսինքն ֆրանսա-  
կան յեղափոխութիւնը, միթէ մի-  
տկ քօմիթէի մը գործն էր. —  
Ճշմարտապէս, երբ իրարու կը մօ-  
տեցնեմ ֆրանսական յեղափոխու-  
թեան ժամանակի կուսակցութիւն-  
ներու եղբայրասպան կռիւները և  
մեր քօմիթէներու իրարու նկատ-  
մամբ բռնած դիրքը, չեմ կրնար  
չհիշանալ այն բարձր բարոյականին  
վրայ զոր մեր Ազգը կը ներկայացնէ

Փոխանակ ցաւելու որ մեր  
խնդիրը զանազան տարբեր կուսակ-  
ցութիւններու կողմէ պաշտպանուած  
է, ընդհակառակը պէտք է հրճուինք  
որ այս ծանր պարագաներուն մէջ,  
ընդհանուր ազատութեան նպատա-  
կին համար այսքան բազմապատիկ,  
յաջորդական և տարբեր գործութիւն  
ներ ծնունդ առած են մեր մէջ:

Քաղաքական կացութիւններ  
կան որոնք երկարատեւ կորովի մը  
ծաւալումը կը պահանջեն. — Ազգ  
մը ամբողջովին կրնայ այս կորովը  
հայթհայթել. բայց անհատներ կամ  
սահմանափակ խումբեր չեն կրնար  
երկար ատենի համար հայթհայթել  
այդպիսի կորով մը: Ինչոր ալ ընեն  
իրենց գերը կատարելու համար,  
հարկաւորապէս պէտք է որ տեղի  
տան: Որչափ մեծ ըլլայ իրենց վատ-  
նած կորովը այնչափ շուտ կ'իյնան  
սպառումի մէջ: Ասկէ զատ, քաղա-  
քականութեան պարագաները, ինչ-  
պէս կը տեսնենք, մէկ օրէն միւսը  
կը փոխուին և անոնք որ տարբեր  
քաղաքականութեան մը ժամանակ  
գործել սկսած են, դժուարաւ նոր  
քաղաքականութեան մը համեմատ  
կրնան փոխել իրենց ընթացքը:

Այոպէս ուրեմն աշխատու-  
թեան բաժանումը, ազատութեան  
գործին մէջ, առաւելութիւններ կը  
ներկայացնէ զոր պէտք է ուրանալ:

Կ'ընդունինք որ մեր քօմի-  
թէները յաճախ տարբեր հնարքներ  
գործածեցին: Երբեքն եղաւ որ ի-  
րարու բախեցին, իրարու շարժումները  
կաշկանդեցին: Պէտք է այս ման-  
րամասնութիւններուն վրայ ծան-  
րանալ, այլ միայն հարցնել թէ ի-  
րենց ջանքերուն ամբողջութիւնը  
Ազգին օգտակար եղած է թէ ոչ:

Ասոր համար գումարները բո-  
լոր աշխատութիւնները զորս մին-  
չեւ այսօր կատարած են « Ընչակ »  
« Իրօչակ » « Առմէնիա », « Ըայք » Զերազ,  
Պրուսալը և բոլոր այն անհատա-  
կան և հաւաքական գործողութիւն-  
ները, պզտիկ կամ մեծ:

Արդ՝ այս գումարումին մէջ  
կը գտնենք ընդհանուր արդիւնք մը  
որ կրնանք համարձակ ըսել թէ  
խիստ կարեւոր յաղթութիւն մը կը  
կազմէ Ըայաստանի համար:

Իրաւամբ թուրքը իր բիրտ ու-  
ժով մենէ վեր էր: Եթէ այդ  
բիրտ ուժին միանար նաեւ դրամը,  
ուզածին պէս մեզ պիտի կրնար  
ջախջախել: Պէտք էր զինքը գործե-  
լու անկարող վիճակի մը մէջ դնել,  
հակառակ իր ձեռքը ունեցած բիրտ  
ուժին: Այս գործը կատարուած է:  
Թուրք կառավարութիւնը սնանկու-  
թեան առաջնորդեցինք: Պէտք է  
որ զինքը այդ սնանկութեան մէջ  
պահենք:

Ասկէ զատ մեր շարժումները  
հետզհետէ անկախութեան զգացումը  
կ'արթնցունեն միւս բոլոր հպատակ  
քրիստոնեաներուն՝ և նոյն իսկ բար-  
բարոս ցեղերուն մէջ: Այնպէս որ  
թուրքը ամեն կողմէ շրջապատուած  
է թշնամիներով որոնք կը սպառ-  
նան իրեն: Ասիկա երկրորդ ար-  
գիւնք մըն է զոր պէտք է մշակել  
և առողջ տանիլ:

Ամէնքը այս չէ: Ըայկական  
խնդիրը իր արեւելեան շրջանէն դուրս  
ելլելով, իբրեւ խնդիր կը ներկա-  
յանայ Եւրոպայի, ինչ կ'ըսեմ,  
տիեզերքի առջև. — Ահա՛ Ըայաս-  
տանը, արիւնոտ և կենդանի, կը  
ցցուի ցամաքներու վրայէն եւ կը  
հրաւիրէ ժողովուրդները կամ ար-

տաղբիշներու և կամ կործանիչներու կողմն բռնելու: Միւս Ազգերը պիտի պարտաւորին կամ աղատութեան համար կռուողներու հետ ըլլալ, կամ մութ և վայրագ բռնակալութեան հետ: Մեր արիւնով աշխարհի պատմութեան ամենէն լուրջ երեսներէն մէկը պիտի գրուի: Ըիմակուց կրնանք հպարտութեամբ հաստատել թէ՛ Լայկական խընդիրը մեծ տեղ մը պիտի բռնէ քսաներորդ դարու քաղաքական և բարոյական կեանքին մէջ:

Լայկական ողբերգութիւնը բնաւ լինցած չէ: Դեռ միայն առաջին արարուածը խաղացինք: Ըիմա երկրորդը պիտի խաղանք, որ է՝ ամենքս մէկ նետուիլ մեր հայրենիքին վրայ և գրաւել զայն զէնք ի ձեռին:

Կըսուի թէ այս առաջին արարուածը շատ սուղի նստաւ մեզի. Միթէ դեռ այդչափ տգէ՞տ էք կարծելու համար որ մեր անկախութիւնը ձեռք պիտի բերենք բանակացութիւններու և ֆէրմաններու խաղաղիկ ճամբով. — Արիւնի կոհակներու, վառօթի ամպերու, թնթանօթի ձայներու միջև, քսան ջախջախիչ պարտութիւններէ ետքը և մէկ, երկու, երեք յանկարծական յաղթութիւններէ վերջ է որ հարիւր տարիէ ի կազմուած են Միացեալ-Նահանգները, հարաւային Ամերիկայի տասներկնգ հանրապետութիւնները, Յունաստանը, Ռումանիան, Սերպիան, Իտալիան, Պուլկարիան . . .

Ասկէ զատ, միթէ իրական կորուստներ ունեցանք: — Երբ անկեղծան բնութեան մէջ բան մը չը կորսուիր, միթէ կարելի է երեւակայել որ այնչափ պատկառելի տարր մը, ինչպէս է հարիւր հազար հայերու արեան լիճը, անխնայութեան մէջ երթայ: — Չէ՞ք զգար միթէ. այս արիւնը կենդանի է: Այս արիւնը մենք մեր մէջը կը կրենք: Մեր երակներուն մէջ անցաւ, մեր անդամներուն մէջ կը շրջի, մեր բազուկները լեցուցած է, մեր քնացած սրտերը արթնցուց, մեր ուղեղին մէջ բերաւ առնական մտածումներու կորովը, մեզի նոր մա՛րդ մկրտեց:

Պէտք է ջանանք ամեն չարիքի տակ ծածկուած բարիքը տես-

նելու: Մեր անհատական տառապանքները ազգին համար դժբախտութիւն մը չեն կազմեր. ընդհակառակը ազգը անոնցմէ կ'օգտուի: Ըողին տակ պառկած ամէն մէկ արիւնալից մարմին մէյմէկ քարի հատոր է որ Լայստանի հիմերէն մէկը կը ձևացնէ: Այսպէս ամեն տեղ և ամեն առեն կանգնած են Լայրենիքի աւերակները:

Տակաւին թարմ դիակներ, ո՞վ անծանօթ հերոսներ, դուք չէք մեռած: Օր մը, օր մը որ հեռու չէ, զոհակներու ծանր հնչիւնովը, ազատ գրօշակներու տակ, ամէն կողմ ցրուած ծաղիկներու բոյրերուն մէջ, երգերու ձայներով, ձեր յիշատակը պիտի տօնենք, մեր գրաւած հողին վրայ, փայլուն արեւի մը տակ և դուք պիտի ապրիք հայերու մշտնջենք մէջ, Աւարայրի գալտին մէջ ինոզ հայերուն պէս անջնջելի կերպով: — Յարգենք կիներու ցաւերը և տղաքներու կեանքը. բայց մենք անվեհեր կերպով նայինք ապագային վրայ:

Միութեան վրայ. — որուն այնչափ ջերմապէզ կը փափաքի այս թերթը. — քիչ մը քան կը մնայ ինծի ըսելիք: Եթէ մինչև հիմայ Միութիւնը չէր եղած պատճառը այն էր որ պարագաները չէին ներքի, կռուի առաջին շրջանին մէջն էինք դեռ, այսինքն խառնաշփոթ շրջանին մէջ: Առանց մարդարէ ըլլալու կարելի է նախատեսել որ Միութիւնը պիտի կատարուի մօտաւոր ժամանակի մը մէջ:

Ժամ առաջ իրագործելու համար այս գաղափարը «Միութիւն» պէտք չէ պարտաւէ բաժանումը (որովհետեւ այդ կերպով զայն տեական կ'ընէ), այլ պէտք է փառաւորէ ամենէն աւելի աղատութեան գաղափարը:

Աղատութիւնը ձեռք բերելու համար երկու բան հարկաւոր է մեզի. Ստակ և Արիւն: — Ուստի Միութիւնը պէտք է քարոզէ աշխատութիւնը — քանզի աշխատութիւնը հարստութիւնը կ'արտադրէ և եթէ նոյնիսկ տաժանելի ըլլայ և բիշ չափ բերէ գարծեալ միտքը առողջ և մարմինը կորովի պահելու առաւելութիւնը ունի: Այն մարդը որ չը աշխատիր վտանգ մըն է Լայրենի-

քին համար. իր բազուկները կը թուլնան, իր ուղեղը անիրազործելի եղանակներով կը լեցուի, իր շրթունքները անբարտաւան խօսքի դուրս կուտան: «Միութիւն»ը պէտք է իր ձեռքը իղած միջոցներով ջանայ նպաստելու որպէսզի ծուլութիւնը և մուրացկանութիւնը վերցուին: — Միենոյն ժամանակ պէտք է հասկըցնէ հարուստներուն, ո՛չ թէ վերաւորիչ, այլ բաջալերիչ խօսքերով, թէ իրենց շահերը սեղմօրէն կապուած են ընդհանուր դատին հետ. թէ պարտաւոր են այս նեղութիւնները կրել որպէսզի կարող ըլլան օր մը իրենց տղոց ժառանգութիւն ձգել, եղծանելի պանք — նօթներու հետ միասին, ազատ մարդու մը յատկութիւնը որ դարէ դար անոնց ձակտին վրայ անկորուստ պիտի փայլի: — Եթէ մեր մէջ որ և է բաժանում առաջ գայ, այս թերթը պէտք չէ որ և է կողմի մը յարի: Պիտի ջանայ միայն զանոնք հաշտեցնելու: «Միաբանութիւն» ըսող բերնէ մը պէտք չէ որ և է դառն խօսք մը ելլէ: — Վերջապէս, ամէն բանէ վեր, «Միութիւնը» պէտք է փառաւորէ մահը որ այն շողջողուն դուռն է ուրէն դուռնաք մտնել մեր Լայրենիքը:

Նկատենք մեր այժմու դիրքը, որ ստեղծուած է հայկական ուժերու ամբողջութեամբ, և զայն նկատենք վստահութեամբ, գոհու նակութեամբ: Դեռ շատ ընելիք բաներ ունինք: Ասոր համար մեզի հարկաւոր է, այս տխուր գէմքերու միջև, որոնցմէ կ'անցնենք ու պիտի անցնինք, որ աղատօրէն չնչենք, որ վստահ հոգի մը ունենանք: Ըիմա անցած գացած բաներու վրայ ցաւելու ատեն չէ: Մեր շրթունքներուն վրայ ունենանք ժպտութեան ունց որոնք ստոյգ յաղթութեան մը կը դիմեն:

Ունենանք սիրտ ու բազուկ այնչափ անսասան որչափ մեր երկրի ժայռերը որոնց վրայ պիտի կանգնենք դարաւոր և անկործանելի շէնքը Լայստանին: Ամէն:

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

Աթէնք 1 Նոյեմբեր 96

# ԵԳԻՊՏՈՍԻ

ԸԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Այս օրերս առիթ ունենալով այցելել Ալեքսանդրիա և Գահիրէ, տեսանք հոն ապաստանող Պոլսեցի ժառանգականները : Մենք որ հոս հանդիսատես եղած էինք Աթէնք և Բիրէ գտնուող չքաւոր հայ գաղթականներու խղճալի վիճակին, սրտի գոհունակութիւն մը զգացինք տեսնելով Եգիպտոս ապաւինող մեր հայ եղբայրներուն բարեւաւ վիճակը : Ալեքսանդրիայի հայկական եկեղեցին ապաստանարան եղած է մօտաւորապէս 800 հայերու, որոնց մէջ կը գտնուին բազմաթիւ ընտանիքներ : Ասոնք ամենքն ալ պատըսպարուած են թէ՛ եկեղեցիին պատկանող կալուածներու մէջ և թէ՛ եկեղեցիին ընդարձակ պարտէզը դբուած վրաններու տակ : Մէկ քանի յանձնախումբներ, օտարազգի և հայ ծանօթ անձնաւորութիւններէ կազմուած, այդ գաղթականներու օրական պէտքերը կը մատակարարեն և միւս կողմէ կը ջանան աշխատելու կարող անձերու գործ հայթհայթել : Ասոնք որ ծոյլ չեն և քիչ շատ գործ մը կատարելու կարողութիւն ունին, արդէն կրցած են իրենց օրապահիկը ճարելու չափ աշխատանք մը գտնել : Կարօտեալներուն կը տրուի օրական սնունդ, ճերմակեղէն և այլն . հիւանդները կանսնաւարապէս կը դարմանուին, բժշկական մարմնոյ մը ձեռքով և բոլոր դեղերը ձրիաբար կը տրուին : Կառավարութիւնը, իր կողմէն, ձեռքէն եկած օգնութիւնը կ'ընէ գաղթականներուն . քսանըհինգ շրջանի օրինական տուգանքը որ կ'առնուի անցագիր չունեցող ճամբորդներէ, հայ գաղթականները չեն վճարեր, ասկէ զատ իրենց գոյքերը առանց մաքսային ձեւակերպութիւններու ուղղակի եկեղեցին կը փոխադրուին : Յանձնախումբը նաեւ համաձայնած է երկաթուղիի և չոգենաւային վարչութիւններու հետ որպէսզի իր կողմէ ներկայացած հայերը կէս գնով ճամբորդեն :

Գահիրէի հայկական եկեղեցին կը պատսպարէ 400 է աւելի հայ

ժառանգականներ, որոնց մէկ մասը կը բնակին եկեղեցիին շրջափակին մէջ գտնուող շէնքերուն մէջ և միւս մասը յատկապէս վարձուած երեք ընդարձակ տուններու մէջ : Այս գաղթականներուն ամէն պէտքերը ևս կը հոգացուին Գահիրէի մէջ կազմուած Յանձնախումբի մը ձեռքով, որուն նախագահն է Տիգրան փաշա, Եգիպտոսի նախկին արտաքին գործերու նախարարը :

Այս տեղեկութիւնները տալով մենք դիտաւորութիւն չունինք յորդորելու հայ գաղթականները որ ելլեն Եգիպտոս երթան, միայն ուղեցիրնք ցոյց տալ թէ Եգիպտոսեան հայերը անտարբեր չեն իրենց թշուառ հայրենակիցներուն նկատմամբ և ձեռքերնէն եկած օգնութիւնը չեն ղլանար անոնց :

Մեր միակ խրատը բոլոր փախըստական հայերուն այն է թէ՛ չվերադառնան երբեք պոլիս մինչև որ հիմնապէս բարեփոխութիւն մը չըլլայ արդի վիճակին : Պոլսէն առած մեր բոլոր տեղեկութիւնները սոսկալի գոյներով կը նկարագրեն ընդհանուր վիճակը : Պէտք է միամտօրէն խաբուիլ թուրք կառավարութեան ստայող յայտարարութիւններէն : Պոլիս մնացող ամեն հայ ջարդուելու վտանգի մէջ է միշտ և թուրք կառավարութիւնը ամէն միջոց ի գործ կը դնէ ձեռքի տակէ դրգուելու համար թուրք բարբարոս մեղեանդները հայերուն դէմ :

Այն մէկ քանի հայերը որոնք հաւատալով զանազան խոստումներու վերադարձած էին Պոլիս, ոտքերնին բարափը դնելուն պէս ձեռքակալուած և բանտ առաջնորդուած են : Այդ քանի մը միամիտնէնու ղլխին եկած փորձանքը թո՛ղ դաս մը ըլլայ գոնէ միւսներուն :

Ուրիշ խրատ մըն ալ կ'ուղղենք մեր գաղթականներուն : Թո՛ղ ջանան ժամ առաջ գործ մը գտնել և աշխատիլ, իրենց դիրքը չը ներէր դժուարահաճ ըլլալու, պէտք է քիչով գոհանալ . ծուլութիւնը և անգարծութիւնը Սուլթան Լամիտէն շատ աւելի թշնամի մըն է մեզի համար :

Ցաւելով տեսանք որ Աթէնքի մէջ շատ մը հայեր, առողջ ու կորովի, գործ մերժեցին ըսելով թէ աշխատանքը ծանր էր : Ամօթ է ասիկայ : Նոյն բանը լսեցինք թէ

պատահեր է նաեւ Եգիպտոսի մէջ, Ըայերը մինչև հիմայ աշխատանքը, ժուժկալ ժողովուրդի համբաւ կը վայելէին Եւրոպացիներուն քով և իրենց այս համբաւին շնորհիւ քիչ շատ համակրանք ցոյց կը տրուէր իրենց նկատմամբ : Պէտք է աշխատինք որպէսզի արդարացնենք այդ համբաւը : Ծոյլ մարդ մը արժանի չէ ազատ ըլլալու :

ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Ահա՛ այսօր հրապարակ կը հանենք «Միութեան» հինգերորդ թիւը : Բանի մը ամիսներ հազիւ բոլորեցան յորմէյետէ լոյս տեսաւ մեր ամսաթերթը և արդէն գոհութեամբ կը տեսնենք որ ջերմ համակրանքով կը շրջապատուի ժողովուրդին ամեն խաւերէն : Մենք լաւ գիտենք որ այս յաջողութիւնը չեն պարտիր մեր անձնական արժանիքին որ ոչինչ է, այլ այն գաղափարին ուրուն յրկանը եղած է մեր թերթը :

Օր չանցնիր որ նամակներ չը ստանանք աշխարհիս ամեն կողմերէն որոնց մէջ արտայայտուած չըլլայ միութեան փափաքը : Քաջալերիչ յորդորաքներ կը տեղան ամէն կողմէ և ամէն անկիւնէ «Միութիւն» ամսաթերթը կը խնդրեն : Ի նպաստ միութեան գաղափարին եղած այս շարժումը զօրաւի՞ր մըն է մեզի մեր յանձը առած պաշտօնը աւելի խանդով առաջ տանելու : Բայց միութիւնը միմիայն պղատոնական փափաքներով չիրագործուիր և միութիւն քարոզելը անպատճառ միութիւն առաջ չը բերեր, պէտք է նաեւ գործնական միջոցներու եւս գիւմել :

Մենք սր «Ձայն բարբառոյ յանապատի» չենք ուզեր մնալ, այլ ամեն խոչնդոտներու յաղթելով գործադրել մեր առաջադրած գաղափարը, այո մասին ունինք շատ մը իրագործելի ծրագիրներ զորս հետը հետէ պիտի ներկայացնենք հասարակութեան :

## «ԱԻԱՂ ՓԱՌԱՑՍ ԱՆՑԱԻՈՐԻ»

Կը լսենք թէ Ընչակեան Կուսակցութիւնը ընդարձակ տեսարակով հասարակութեան առջև դիմակազերծ պիտի ընէ Նազարպէկեանները, որոնք տարիներէ ի վեր այդ յեղափոխական կուսակցութիւնը կը վարէին: Այս տեսարակ փաստերով պիտի հաստատէ եղբւր տէր և տիկնոջ տարիներէ ի վեր գործած զեղծումները և իրենց ֆրասարեր և կործանարար դերը:

Կը սպասենք անհամբեր այդ հետաքրքրական հրատարակութեան, թէ և կարծենք պէտք չի կար Նազարպէկեանները ճանչնալու համար այդպիսի պաշտօնական հրատարակութեան մը: Իրենց գոյնը շատոնց մէջտեղ ելած էր, և կամաւոր կոյրերն էին միայն որ չէին ուզեր տեսնել:

Երբ միտք կը բերենք դեռ տարի մը առաջուան Նազարպէկեաններու աստուածացումը և իրենց այժմեան տղամարմնաւ անկումը, չենք կրնար մեկամաղձիկ հաւաք մը չարձակել աշխարհային իրաց անկայուն վիճակին վրայ:

Ուրեմն իրաւ այսչափ մօտ է եղեր Տարպեան ժայռը կապիտոլին:

Ուր մնացին Աւօ և Մարօ զօրագունները. «Աւաղ, փառացս անցաւորի»:

Ասիկա թո՛ղ դաս մը ըլլայ մեր ժողովուրդին ամէն փայտ իբրեւ կուռք չպաշտելու: Իր սխալը շատ սուղի նստաւ:

## ԼՐՏԵՍ ՄԸ

Գահիրէէն մեր թղթակիցը կը գրէ թէ հայ լրտես մը հասեր է Եգիպտոս: Այս աղտոտ մարդը կը կոչուի Մ. Մանուէլ Միքայէլեան. բնիկ Եգիպտացի է, միջնահասակ, սև տաճկական մօրուքով, նիւար, և բարակ քիթով: Գահիրէ գալով ուզեր է մօտենալ իր հայրենակիցներուն, բայց բազմին ալ զինքը լա-

ճանչնալուն բնաւ երես չեն տուէր՝ որով ստիպուեց ի գահիրէէն մեկնելու և ըսեր է թէ Եգիպտացիներէ: Այս անձին բրած վասակութիւնները, թէ Եգիպտացի և թէ Սեբաստիայի մէջ, խիստ շատ են եղեր և հարիւրաւոր ընտանիքներու թշուառութեան պատճառ եղած է:

\* \* \*

Ամերիկայէն մեզի ուղղուած նամակ մը խորհուրդ կուտայ հայերուն որ չգաղթեն Ամերիկա ուր դաջողներէն շատեր խիստ թշուառ վիճակի մը մատնուած են:

Վառնայի մեր թղթակիցը կը գրէ թէ՝ հոն ապաստանած հայ փախըստականներու թիւը 12-13000 ի բարձրացած է: Պուկար կառավարութիւնը և ժողովուրդը մեծ համակրանք ցոյց կուտան եղբւր մեր թշուառ հայրենակիցներուն:

## ՆԱԶԸՄԻ ԱՆԿՈՒՄԸ

Աչքդ լոյս, հայ ժողովուրդ, վեհափառ Սուլթան Ըամիտ խան ահա՛ բարենորոգումները սկսաւ. ոստիկանութեան նախարար Նազըմ փաշա պաշտօնանկ եղած է և իրեն յաջորդած է Շէֆիք պէյ: Տեղափոխման Տէրութիւններու միջամտութեանը, Միթինկներուն, Սալապրիի ճառերուն, կլատսթոնի նամակներուն, Ջարին ուղեւորութեան, նաւատորմի ղեկներու առաջխաղացութեան, հարցապնդումներու և ամբողջ Եւրոպական զիւանագիտութեան իրաւանցումներուն արդիւնքը: Ալ հիմայ թո՛ղ երթան բոլոր դեսպանները շնորհակալութիւն յայտնեն Սուլթանին, իր այդ մեծ բարեփոխութեանը համար: Մենք գիտենք թէ Նազըմներու, Իզզէթներու, Սալիտներու կամ Մուսթաֆաներու փոփոխութիւնը չէ որ մեզ պիտի ազատէ բարբարոս բռնակալութեան ձեռքէն. մենք գիտենք թէ ձուկը գլխէն հոտած է արդէն և այդ տեսակ զիջումները չեն որ պիտի հանդարտեցունեն անձնուէր հայրենասէրները:

Այս առթիւ կը ծանուցանենք նաև թէ Տիրան պէյ Տաթեան և պ. Արմենակ Աճլմեան, բանաստեղծ Մկրտիչ Աճլմեանի որդին, որոնք յեղափոխականները Սուլթանին հետ հաշտեցնելու համար Եւրոպա պոյ՝ տի ելած էին, խայտառակաբար վրանտուեր են ամէն կողմէ և միայն Բողանոցներու մէջ կրցեր են սիրաւոր ընդունելութիւն գտնել, այն ալ շնորհիւ վեհափառ Սուլթանին ոսկիներուն:

## ԱՅԼ ԻՅ ԱՅԼԲ

Շաբիր փաշայ՝ Վանայ լճին վրայ շոգենաւային փոքրիկ տորմիզ մը հաստատելու համար ծրագիր մը մատուցած է Սուլթանին և նա՝ ընդունած է: Այդ շոգենաւերուն հրակողութիւնը, «Մախսուսիի վարչութեան ներքեւ պիտի դրուին եղբւր»:

Լօնտոնի Անկլօ - Արմենական գոմիթէն մինչև այսօր Ըայաստանի 28 գաւառներու մէջ նպաստ զրկած գումարը 58,722 Անգլ. ոսկի կը հասնի: Այդ գումարը բաշխուած է 100,000 զարկաւոր Եգիպտական հիւպատոսներու և Ամերիկացի միսիոնարներու ձեռամբ:

Ամերիկայի մէջ մինչև հիմա ի նպաստ հայ կարօտելոց հանգանակուած գումարը 500,678 տօլարի հասած է:

Վերջին ցոյցին շաբթուն օգոստ. 17 շաբաթ օր Ղալաթիա Վիթալիո խանի բեռնակիր Նիկողոս, խահվէճի Տիգրան, բեռնակիր Բաբէլ և Մարգար, և օտապաշի Սըվաղի Վարդան ձերբակալուած էին իբր թէ նոյն օրը յիշեալ խանէն ոռւմբ նետած ու տորքանակ պարպած են թուրք զօրքերուն վրայ, որոնց մին սպաննուած և միւս մը ծանրապէս վիրաւորած են եղեր: այժմ կը լսենք թէ Նեղոնադատատեանը մահուան դատապարտած է տոյ խեղճերը:

Միւսնոյն ամբաստանութեամբ նոյն օրը մահուան դատապարտուեցան խաս-գիւլցի Աւետիս և իր որդին Օննիկը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ — «ՄԻՈՒԹԻՒՆ»-Ի Արտօտնատէր Ա. ԳՕԲԲԻՆՈՍ